ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«16» 06 2020 թ. N 394-Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 771-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի՝
   1) Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների բաժինը վերակազմավորել Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման,
   2) Արտադրության, նորոգման և օգտահանման բաժինը վերակազմավորել Արտադրության, նորոգման և օգտահանման վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման,

3) Որակի վերահսկողության բաժինը վերակազմավորել Որակի վերահսկողության վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման,

4) Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման բաժինը վերակազմավորել Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման

5) Վարչական բաժինը վերակազմավորել Գործերի կառավարման վարչություն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման:

2. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի կազմում ստեղծել Միջազգային համագործակցության բաժին և Առաջին բաժին աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի կանոնադրությունը և կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2019 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 771-Ա հրամանը:

6/16/2020

X

VERIFIED OCSP 6/16/2020 19:58:09 GMT+4

Signed by: ARSHAKYAN HAKOB 2604850279

ՆԱԽԱՐԱՐ **Հ.ԱՐՇԱԿՅԱՆ**

„16" 06 **2020թ**

ք. Երևան

Հավելված

Հայաստանի Հանրապետության բարձր
տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարի 2020 թվականի հունիս 16-ի
թիվ 394-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) ենթակա մարմին է:

2. Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Կոմիտեն գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Կոմիտեի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտե, հայերեն կրճատ՝ ՀՀ ԲՏԱՆ ՌԱԿ.

2) ռուսերեն լրիվ՝ Военно-Промышленный Комитет Министерства высокотехнологической промышленности РА, ռուսերեն կրճատ՝ ВПК МВП РА.

3) անգլերեն լրիվ՝ Military Industrial Committee of Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia, անգլերեն կրճատ՝ MIC MHTI RA:

4) ֆրանսերեն լրիվ՝ Comité militaro-industriel du ministère de l’industrie des hautes technologies de la République d’Arménie, ֆրանսերեն կրճատ՝ CMI MIHT RA

5. Կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Կոմիտեն կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Կոմիտեի կառուցվածքում ընդգրկվում են Կոմիտեի նախագահի, Կոմիտեի նախագահի տեղակալի, Կոմիտեի գլխավոր քարտուղարի, Կոմիտեի նախագահի օգնականի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները:

7. Կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

8. Կոմիտեի գտնվելու վայրն է՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3:

II. ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Կոմիտեի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունից բխող միջոցառումների մշակումը և իրականացումը,

2) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի (այսուհետ՝ ՌԱՀ) կազմակերպությունների, սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ռազմատեխնիկական ունեցվածքի զարգացման ծրագրերի իրականացման ապահովումը,

3) զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային պահանջների բավարարումը:

4) ՌԱՀ-ի արտադրանքի արտահանման խթանման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

5) ռազմատեխնիկական քաղաքականության իրագործումը, ռազմարդյունաբերության կայուն և նորարարական զարգացումը.

6) հայրենական մրցունակ ռազմական արդյունաբերության ստեղծումը և զարգացումը.

7) Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության նպատակով ձեռք բերվող ռազմական ապրանքների և գույքի առավելագույն մատակարարումը ՌԱՀ-ի կազմակերպություններից.

10. Կոմիտեի խնդիրներն են՝

1) զինված ուժերի սպառազինության ու ռազմական տեխնիկայի և դրանց առանձին հանգույցների ու սարքավորումների վերականգնման և արդիականացման աշխատանքների, ինչպես նաև նոր նմուշների մշակման ու արտադրության կազմակերպումը,

2) ՌԱՀ-ում ռազմական պատվերի կատարման որակի հսկման ապահովումը,

3) ՌԱՀ-ի կազմակերպությունների միջոցով զինված ուժերի և այլ պատվիրատուների պատվերների կատարման ապահովումը,

4) մասնակցումը ռազմարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության ապահովմանը,

5) ռազմարդյունաբերության ոլորտում իրականացվող գիտական և գիտատեխնիկական մշակումների կազմակերպումը,

6) ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրումը

7) ռազմարդյունաբերական քաղաքականության սուբյեկտների պետություն-մասնավոր ընկերակցություն համագործակցության կարգավորումը

8) ռազմական կարիքների համար պետական պատվերի բնագավառում մենաշնորհից պաշտպանվածության ապահովումը.

9) ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորումը, հաստատումը և տեղադրումը.

10) ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորումը

11) ռազմավարական հումքի, նյութերի և էլեկտրոնային դետալների պետական պահուստի ստեղծումը.

12) ռազմարդյունաբերական գործունեության տարբեր ոլորտների ներդաշնակ զարգացումը.

13) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների պետական կառավարման ապահովումը.

III. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծեր,

2) իր իրավասության սահմաններում սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի զարգացման ու պահպանման, ռազմարդյունաբերության, ռազմատեխնիկական համագործակցության նախագծերի մշակում և իրականացում, մասնակցում է ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցության ծրագրերի նախագծերի մշակմանը,

3) ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական բազայի վարում,

4) սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության ու նորոգման համար արտադրական հզորությունների ստեղծմանն ուղղված պետական ներդրումների ներգրավման միջոցառումների մշակում և իրականացում,

5) սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական միջոցների պետական պատվերի (ներհանրապետական գնումներ, նորոգման, արդիականացման ու հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ) ու դրա ձևավորման կարգի մշակում,

6) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների գրանցման կարգի մշակում,

7) ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորման մեթոդների, դրանց կիրառման մեխանիզմների ու ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման գնի որոշման կարգի մշակում,

8) պատվիրատուի ներկայացուցչության (ներկայացուցչի) կողմից ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման որակի հսկողության կարգի մշակում,

9) ՌԱՀ-ում ռազմական պատվերի կատարման որակի կառավարման համակարգի ներդրում, վերահսկում և իրականացում,

10) զորահավաքային նախապատրաստության ծրագրերի և զորահավաքային առաջադրանքների մշակում,

11) Հայաստանի Հանրապետության ռազմատեխնիկական քաղաքականության իրականացմանը և ՌԱՀ-ի արտադրանքի արտահանման խթանման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը մասնակցություն

12) պետական պահուստում կուտակման ենթակա՝ ՌԱՀ-ում օգտագործվող նյութական արժեքների ցանկի և վարման կարգի մշակում,

13) ՌԱՀ-ի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման կարգի մշակում,

14) հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների տակտիկատեխնիկական պահանջների, տեխնիկական առաջադրանքների ելակետային տվյալների և մեթոդական-նորմատիվային փաստաթղթերի ստեղծման կամ դրամց ստեղծման աշխատանքներին մասնակցություն,

15) ՌԱՀ-ին առնչվող հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական ծրագրերի պետական գիտական և գիտատեխնիկական փորձաքննության կազմակերպման աշխատանքների իրականացում,

16) նոր ստեղծված, արդիականացված և նորոգված սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական միջոցների փորձարկումների կազմակերպում, այդ թվում նաև զորավարժարաններում,

17) հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների, փորձանմուշների, ներհանրապետական արտադրանքի տեսականու մասին տեղեկությունների և տեխնիկական փաստաթղթերի հավաքում ու հաշվառում,

18) պաշտպանական պատվերի և օգտահանման աշխատանքների գնագոյացման և շահութաբերությունը խթանող միջոցառումների իրականացում,

19) Հայաստանի Հանրապետությունում առկա՝ ռազմարդյունաբերությանն առնչվող տեխնոլոգիաների հաշվառում և համապատասխան բազայի ստեղծում ու վարում,

20) ՌԱՀ-ի ինժեներատեխնիկական, գիտատեխնիկական և միջին մասնագիտության մասնագետների պատրաստման ծրագրերի մշակում և դրանց իրագործման խթանում,

21) նախարարության համակարգում միասնական գիտատեխնիկական քաղաքականության իրականացման նախագծերի մշակմանը մասնակցություն,

22) մշակում է ՌԱՀ-ի գործունեությունը կարգավորող ու համակարգող կարգերը,

23) մասնակցում է մարտական զենքի արտադրության համար լիցենզիա տրամադրող լիազոր մարմնի գործառույթներին, ինչպես նաև տրամադրվող լիցենզիայի պայմանների նկատմամբ հսկողության իրականացմանը,

24) մասնակցում է ՌԱՀ-ի կադրերի պատրաստման պետական ծրագրերի մշակման և համապատասխան պետական պատվերների ձևավորման աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը,

25) մասնակցում է նախարարության կառավարմանը վերապահված պետական բաժնեմաս ունեցող՝ ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ընդգրկված ընկերությունների կառավարման իրականացմանը,

26) համակարգում է ՌԱՀ-ի սուբյեկտների միջև համագործակցության գործունեությունը,

27) ապահովում է ՌԱՀ-ի միասնական տեղեկատվավերլուծական համակարգի մշակման, ներդրման աշխատանքների կազմակերպումը,

28) իր իրավասության սահմաններում ապահովում է ռազմական դրության պայմաններում զորահավաքային պահանջմունքների բավարարման համար զորահավաքային առաջադրանքների կատարումը,

29) մասնակցում է պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների գործունեության ապահովմանը:

IV. ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Կոմիտեի կառավարումն իրականացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարը (այսուհետ՝ Նախարար):

13. Նախարարը՝

1) հաստատում է Կոմիտեի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը և կանոնադրության փոփոխությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները,

3) իրականացնում է Կոմիտեի գործունեության նկատմամբ վերահսկողություն,

4) լսում է Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները,

5) վերահսկողություն է իրականացնում Կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ,

6) Կոմիտեի նախագահի առաջարկությամբ հաստատում է Կոմիտեի հաստիքացուցակը,

7) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

8) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

14. Կոմիտեն ղեկավարում է Կոմիտեի նախագահը:

15. Կոմիտեի նախագահին անմիջական հաշվետու են Կոմիտեի նախագահի տեղակալը, գլխավոր քարտուղարը, Կոմիտեի նախագահի օգնականը և հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

16.Կոմիտեի նախագահին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

17. Կոմիտեի նախագահը հաշվետու է կառավարությանը, վարչապետին և նախարարին:

18. Կոմիտեի նախագահը՝

1) պատասխանատու է Կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար,

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և Կոմիտեի անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության և Կոմիտեի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

3) իրականացնում է Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը.

4) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության ոլորտներին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ սահմանված կարգով, նախարարի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջարկություններ,

5) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է Կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

6) հաստատում է ներքին կարգապահական կանոնները,

7) նախարարին ներկայացնում է առաջարկություններ կոմիտեի կանոնադրությունում և կառուցվածքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

8) նախարարին ներկայացնում է առաջարկություններ կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններում և կառուցվածքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ,

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

11) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականները,

12) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

13) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների և կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

14) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, անհատական և ներքին իրավական ակտեր,

15) նախարարին է ներկայացնում Կոմիտեի գործունեության մասին հաշվետվություն,

16) վերահսկողություն է իրականացնում կոմիտեին ամրացված գույքի նպատակային օգտագործման և պահպանության նկատմամբ,

17) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

19. Կոմիտեի հաստիքացուցակը կոմիտեի նախագահի առաջարկությամբ հաստատում է նախարարը:

20. Կոմիտեի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կոմիտեի նախագահի տեղակալը:

21. Կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) գործում է Կոմիտեի նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքները (գործունեությունը) իրեն հանձնարարված ոլորտում,

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակայությանը հանձնված կազմակերպություններին փոխանցում է Կոմիտեի նախագահի հանձնարարականները, ապահովում է Կոմիտեի նախագահի կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կողմից Կոմիտեի նախագահի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Կոմիտեի նախագահին,

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ,

4) կոմիտեի նախագահին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին,

5) իրականացնում է Կոմիտեի նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները,

6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է օրենքով սահմանված համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները,

7) կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է կոմիտեի նախագահի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները,

8) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ստանում է գլխավոր քարտուղարի աջակցությունը, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

9) Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ գործառույթներ:

22. Կոմիտեն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով:

23.Կոմիտեն իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

24.Գլխավոր քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում պետությանը իր մեղքով պատճառած վնասի համար: Գլխավոր քարտուղարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար: Գլխավոր քարտուղարի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է լուծել նաև նրա՝ պետությանը պատճառած վնասի հատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով պետությանը պատճառած վնասը հատուցում է սույն մասի պահանջը խախտած անձը:

25.Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն անմիջական հաշվետու են գլխավոր քարտուղարին:

26.Կոմիտեի նախագահի հրամանով Գլխավոր քարտուղարին կարող է վերապահվել օրենսդրությամբ սահմանված կարգով Կոմիտեի լիազորությունների իրականացման կազմակերպման, անձնակազմի կառավարման, ֆինանսական գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության գործառույթների և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը:

27.Կոմիտեի գլխավոր քարտուղարը՝

1) առանց լիազորագրի՝ Կոմիտեի իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտավորությունների ձեռք բերման և իրականացման բնագավառներում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և կոմիտեի անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր,

2) օրենքով և այլ իրավական ակտերով տնօրինում է Կոմիտեին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

4) Կոմիտեի նախագահին է ներկայացնում առաջարկություններ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ,

5) Կոմիտեի նախագահին է ներկայացնում աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների մասով՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն,

6) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է Կոմիտեի նախագահի տեղակալի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ,

7) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակա կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Կոմիտեի նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Կոմիտեի նախագահին,

8) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների պատրաստած, ինչպես նաև իր և (կամ) Կոմիտեի նախագահի և (կամ) Կոմիտեի նախագահի տեղակալի անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

9) կազմակերպում է Կոմիտեում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը,

10) կազմակերպում է Կոմիտեում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները:

V. ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

28.Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վարչություն,

2) Արտադրության, նորոգման և օգտահանման վարչություն,

3) Որակի վերահսկողության վարչություն,

4) Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման վարչություն

29.Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Գործերի կառավարման վարչություն

2) Միջազգային համագործակցության բաժին:

3) Առաջին բաժին:

VII. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ

30.Կոմիտեի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից Կոմիտեի կնքած գործարքներով ձեռք բերված և Կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:

31.Կոմիտեի հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը:

32.Կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

VIII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33.Կոմիտեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ ու հայտարարագրեր:

34.Կոմիտեի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: